

ՀԱՅ - ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ 1905-1906 ԹԹ.

Գ. Ա. ԹՈՒԽԱՆՅԱՆ

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումներ ծավալվեցին Բաքվում, Թիֆլիսում, Երևան նահանգի և Գանձակ նահանգի տարբեր բնակավայրերում:

Դրանք, չնայած պարտադրված էին հայությանը, իրենց բոլոր բացասական երևույթներով հանդերձ, դրական բեկում առաջացրին հայ ժողովրդի հոգեբանության մեջ: Դրանում իր վճռորոշ դերն ունեցավ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որը կարողացավ կարճ ժամանակաշրջանում հավաքագրել, զինել և կազմակերպել հայությանը և թշնամու հետ խոսել իր իսկ պարտադրած լեզվով:

Այս ընդհարումների մեկ օղակն էլ Զանգեզուրն էր:

Գավառի ազգաբնակչության ընդհանուր թիվը 138 հազար էր, որից հայեր՝ 63 հազար, թաթարներ՝ 74 հազար և զանազան ազգերի ներկայացուցիչներ՝ 1 հազար: Վարչականորեն գավառը բաժանված էր երեք մասի՝ բուն Զանգեզուր՝ 25, Սիսիան՝ 20 և Ղափան՝ 47 հայաբնակ գյուղերով:

Հայ-թաթարական ընդհարումների առաջին օրերից գավառում իրավիճակը սրրված էր: Զանգեզուրի հայությունը մի կողմից փորձում էր հարևան թաթարների հետ հաշտ ապրել, իսկ մյուս կողմից կազմակերպվում էր՝ անակնկալներին դիմագրավելու:

Ինքնապաշտպանական աշխատանքների կազմակերպման համար այստեղ էին ժամանել Հայ Հեղափոխական Դաշնակցության մարտական գործիչների և զինվորների մի փաղանգ՝ Սեբաստացի Մուրադի (Մուրադ Խրիմյան) ղեկավարությամբ, որին հանձնվել էր Զանգեզուրի ընդհանուր հրամանատարությունը: Նախքան հրամանատարի ժամանումը՝ Դաշնակցության երկու մարտական խմբեր արդեն անցել էին գավառի վտանգված վայրերը:

Օտտ արագ ստեղծվում են տեղական ինքնապաշտպանական ուժերի կազմակերպական կառույցները, որի մասին իր զեկուցագրում տեղեկացնում է Ռոստոմը (Ստեփան Զորյան): «Իւրաքաչիւր գիւղ ունի զինուորական խմբեր, կոռի ընդունակ երիտասարդներից կազմուած: Ամէն մի տասնեակի հետ կայ պահեստի խումբ, 5 հոգուց բաղկացած: Եթէ տասնեակից մէկը սպանուում է, կամ պակասում է որեւէ այլ պատճառով, պահեստի խմբից ամիջապէս մէկը տեղը բռնում է»¹: Կովի ժամանակ հրացանակիրների կողքին լինում էին պահեստի ուժեր՝ «խանչալավորներ», որոնք հրացանակիր մարտիկի զոհվելու կամ վիրավորվելու դեպքում անմիջապէս վերցնում էին նրա հրացանը ու շարունակում կռիվը: Ամեն մի գյուղ ունենում էր զինվորական խորհուրդ՝ 2-5 հոգուց բաղկացած, ընտրված գյուղի ընդհանուր ժողովում: Խորհրդի անդամներին դատական մարմնից միանում էին հավասար թվով անդամներ՝ զինվորական բոլոր գործերը կարգադրելու համար: Զինվորական խորհրդի պարտավորությունների մեջ մտնում էր՝ 1. Ռազմամթերքի հայթայթում, 2. Կովի հատակագծի պատրաստում, 3. Խմբապետների հսկողություն, 4. Զինվորական դատեր վարելը, 5. Ընդհարումների առաջն առնելու համար նախազգուշական միջոցներ ձեռք առնելը:

Խմբապետների ժողովը՝ 1. Որոշում էր դիրքերը, 2. Նշանակում էր ցերեկապահներ և գիշերապահներ, 3. Ընտրում նշանախոս ամեն գիշերվա համար, 4. Հսկում գեներալի մաքրությունը և ռազմամթերքի քանակությունը, 5. Զինվորներին վարժեցնում շաբաթական երկու անգամ:

¹ Տե՛ս Ա.-Գօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում 1905-1906 թթ., Եր., 1907, էջ 244:

² Ռոստոմ, Նամականի, Բեյրութ, 1999, էջ 400:

Կար նաև սանհիտարական խումբ, որի պարտականությունն էր՝ 1. Հավաքել վիրավորներին, կապել վերքերը, 2. Անուղև և ուսումնասիրել հասցնել կողմերին:

Մեկ ամսվա ընթացքում Զանգեզուրի հայկական գյուղերը կազմակերպվում և ենթարկվում են Դաշնակցության որոշումներին: Գործը ղեկավարում էին Մելիքը, Մուրադը, Կորյունը և ուրիշներ՝: Իրենց մասնակցությունն են բերում նաև հնչակյանները: Այս մասին վկայում է այդ օրերին Տաթևի վանքի վանահայր Ներսես Մելիք-Թանգյան վարդապետը՝ ասելով. «Այս կազմակերպչական և ինքնապաշտպանական ամբողջ գործի ընդհանուր ղեկավարը կը համդիսանար Հ.Յ.Դաշնակցությունը՝ իր անձնուղև գործիչներով, հերոսական խմբապետներով և մարտիկ-հայրուկներով: Ժողովուրդի այդ կազմակերպչական և ինքնապաշտպանական հրաշալի գործերն ի յայտ եկան միմիայն յեղափոխական ազդու միջոցներով: Հնչակեաններն էլ, որոնք թէև քիչ էին, բայց այնուամենայնիւ իրենց բարոյական և զինական մասնակցութիւնը ցոյց տուին և միացան Հ.Յ.Դաշնակցութեան՝ պաշտպանելու համար Ղարաբաղ-Զանգեզուրի հայութեան կեանքը, պատին ու գոյքը»¹:

Ռուս Զանգեզուր գավառամասի ընդհարումները

1905 թ. օգոստոսի սկիզբներին, երբ թափառական ցեղերն սկսեցին իջնել յայլաներից, Գորիսի շրջանում նկատվեցին հուզումներ: Տեղացի թաթարները գավառի ճանապարհները վտանգավոր էին դարձրել: Ստրածնիկների հսկողությամբ օգոստոսի 16-ին Գորիսից իրենց տները վերադարձող 4 անվանի հայեր թաթարաբնակ Աղուդի և Վաղուդի գյուղերի սահմաններում ենթարկվում են հարձակման և սպանվում: Ստրածնիկները դիմում են փախուստի: Այս ոճիրը գավառի հայության ընդվզման առիթ է դառնում: Հաջորդ օրը Քյարիմբեկլուի քոչվորները խուզարկվում են հայերի կողմից, քոչվորները շարունակելով իրենց ճանապարհը՝ սպանում են դաշտներում աշխատող 11 հայ գյուղացիների և 4 բեռնակիրների:

Հայկական ինքնապաշտպանական խմբերը, տեսնելով, որ կառավարությունը որևէ քայլի չի դիմում՝ դեպքերի վատթարացման դեմն առնելու համար, մտնում են նախօրոք որոշված դիրքերը: Օգոստոսի 18-ին, երբ հայերը փորձում են արգելել 15 զինված թաթարների մուտքը Գորիս, առաջանում է ընդհարում: Թաթարներից սպանվում է 3 զինյալ, իսկ հայերից՝ 2 հոգի: Սկսվում է դեպքերի սրընթաց զարգացումը: Օգոստոսի 21-ին հրոսակապետ Իլդրիմ-բեկ Սուլթանովը, որը մեծ հրոսակախումբ էր հավաքել, պրիստավ Յավորոսկու միջոցով գորիսեցիներին ներկայացնում է 4 կետերից բաղկացած մի վերջնագիր, որտեղ պահանջում էր՝ 1. Գորիսից դուրս թողնել թուրք բնակիչներին, 2. Ազատ ճանապարհ տալ քոչվորներին, 3. Հետացնել Գորիսի դիրքերից հայ զինված տղաներին և 4. Վճարել 10000 ռուբլի տուգանք՝:

Գորիսի թաթար բնակիչները դուրս են գալիս քաղաքից, բայց հայ մարտիկները չեն լքում դիրքերը և չեն վճարում պահանջված գումարը:

Գավառում իրավիճակը սրվում է Միհրեմդի կոտորածով: Հուլիսին Միհրեմդի ուղարկվում պրիստավ Սաղղը-բեկ Մելիք-Ասլանովը, որը մի կողմից ծրագրում է կոտորած, մյուս կողմից՝ հավաստիացնում է հայերին, որ նրանց որևէ վտանգ չի սպառնում:

Օգոստոսի առաջին օրերին յայլաներից իջնող թարաքյամաններն իրենց վրանները տեղավորում են Միհրեմդի դաշտում՝ ծանրացնելով գյուղի հայերի վիճակը: Օգոստոսի 20-ից 23-ը տեղացի թաթարները, միանալով թարաքյամաններին, անխնայ կոտորում են գյուղի հայ բնակիչներին՝ 700-ից սպանելով 196-ին, իսկ մնացած հայերը թողնում են գյուղը ու տարբեր ուղղություններով հեռանում: Այդ բոլորը կատարվում էր պրիստավի ներկայությամբ՝:

Այդ օրերին Հարար և Զելվա գյուղերը լքած հայ բնակիչների տները կողոպտվում են, իսկ խոզնավարը, Ալիդուլին և Խնածախը կարողանում են փրկվել մասնակի վնասներով:

¹ Տե՛ս «Հ.Յ.Դ. Ապատածի Կ.Կ. Ի 1904-1907 համառոտ տեղեկագիր»:

² «Պատմագրություն Հ. Յ. Դաշնակցութեան», Բ հատոր, Աթենք, 1991, էջ 415:

³ Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 252:

⁴ Տե՛ս «Արշալոյս» օրաթերթ, Թիֆլիս, 1905, 11 սեպտեմբեր, № 11:

Սեպտեմբեր 22-ին թաթարները երկրորդ անգամ հարձակվում են Խոզնավարի և Խնածախի վրա: Հայ մարտիկները, մոտակա գյուղերից օգնություն ստանալով, հետ են մղում թշնամու հրոսակներին և անցնելով հակահարձակման, մեկը մյուսի հետևից գրավում ու ավերում թաթարական Բայիմդուր, Հալաք, Բինաներին, Քոսալարը, Մալի-բեկլու, Ջաղագուր, Չալլու, Քյալավալախ և Նովրուզլու գյուղերը⁷:

Դեկտեմբերի 17-ին ջեռուվեցիների կողմից Տեղի անասունների գողությունը պատճառ է դառնում, որ հայկական ուժերը հարձակվեն Փոքր Ջեջիմլուի վրա ու ավերեն այն, իսկ Մեծ Ջեջիմլուի բնակիչները դիմում են փախուստի, և հայերը ավերում են գյուղը:

Թաթար հրոսակները որոշել էին վերացնել Ջեվլան և հունվարի 21-ին և 22-ին Կլրիմբեկի առաջնորդությամբ հազար ձիավոր շրջապատում են գյուղը: Հայերը սաստիկ դիմադրում են և սպանում մի քանի թաթար, մինչև որ վրա հասած կազակները ու են թուրքական խուժանը⁸:

Ղարաղջաղը կամ Ղարադարասին 600 տնից բաղկացած հայկական միակ գյուղն էր, որը գտնվում էր Օուշի-Տեղ ճանապարհին և հասնում էր մինչև Գորիս: Գյուղի բնակիչների քաջության շնորհիվ հայերը կարողանում էին ազատ երթևեկել Գորիս-Օուշի ճանապարհով:

Սեպտեմբերի 20-ին Բաղր-բեկլու, Ունանալ և Սաֆյան գյուղերի թաթարները միացյալ ուժերով առաջին անգամ հարձակվում են գործում Ղարաղջաղի վրա⁹: Հայերը, հետ մղելով թշնամուն անցնում են հակահարձակման, գրավում և հրկիզում Բաղր-բեկլուն: Երեք օր հետո թաթարական երկրորդ հարձակումը կրկին հետ է մղվում, սակայն գորքի հետ զավառապետ Ավայանի ժամանումը կասեցնում է թաթարական գյուղերի ավերման ծրագրի իրագործումը: Թաթարական ուժերը, համալրելով իրենց շարքերը, դեկտեմբերի 28-ին երրորդ անգամ հարձակվում են Ղարաղջաղի վրա և պաշարում այն: Կատաղի մարտերց հետո հայկական ուժերը հետ են մղում թշնամուն և անցնում հակահարձակման, գրավում և ավերում Քյարահուգ և Ունանալ թաթարական գյուղերը: Ջախողության է մատնվում նաև թշնամու 4-րդ հարձակումը:

Տաթևից Ղափան տանող ճանապարհով երթևեկությունը հայերի համար վտանգավոր է դառնում շրջակա թաթար գյուղերի բնակիչների պատճառով: Հայկական ուժերը 1906 թ. օգոստոսի 8-ին, նպատակ հետապնդելով վերացնել հայերի երթևեկության արհեստական վտանգները, հարձակվում են թաթարական Աղվանի և Տանձավեր գյուղերի վրա: Մուրադն իր խմբով պաշարում է երկու գյուղերը: Նա խումբը բաժանում է մի քանի տասնյակների: Ավրոն իր տասնյակով գրավում է գյուղի աջ կողմի բարձր դիրքը, մեկ ուրիշ տասնյակ Սմբատի ղեկավարությամբ անցնում է գյուղի ձախ կողմը: Վերցնելով իր հետ Դրոյի, Մկրտիչի, Կնյազի, Կալթակ Առաքելի և Արսենի տասնյակները՝ Մուրադը մտնում է գյուղ: Քեռին երկու տասնյակ ձիավորներով շրջում էր մոտակա բարձրությունների վրա, որպեսզի դրսից թաթարները օգնության չգան: Երկու գյուղերում էլ հրդեհն սկսեց լափել տները, իսկ դիմադրող թուրք ասպատակիչներն ընկնում էին հայերի գնդակներից¹⁰: Թաթար հրոսակները, չկարողանալով պաշտպանվել, լքում են գյուղերը և փախուստի դիմում:

Սիսիան գավառամասի ընդհարումները

Սիսիանը, սահմանակից լինելով Նախիջևանի գավառին, կրեց այնտեղ կատարված դեպքերի անմիջական ազդեցությունը: 1905 թ. հունիսի 25-ին անասունների թալանի նպատակով Մուրթուզու գլխավորությամբ Եաղաթի վրա հարձակվող թաթար հրոսակները մինչև երեկո տևած կռվից հետո նահանջում են: Հայկական ուժերը, Ջանգեզուրի ինքնապաշտպանության գորքերի հրամանատար Մուրադի գլխավորությամբ անցնելով հակահարձակման, ավերում են Ուսուրլուի օբան:

⁷ Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 266:

⁸ Տե՛ս «Արշալոյս», 1906, 24 Յունար, № 16:

⁹ Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 271:

¹⁰ Տե՛ս «Դրօշակ», պաշտօնաթերթ Հայ Յեղափոխական Դաշնակցության, Ժնև, 1906, №

Նիկոլ Դումանի կարգադրությամբ Քեռին (Արշակ Գավաֆյան) և Դրոն (Դրաստամատ Կանայան) եկել էին Ջանգեզուր և ստանձնել Սիսիանի գավառամասի պաշտպանությունը:

Նոյեմբերի 22-ին թաթարական Սիսիան գյուղի հրոսակները հարձակում են գործում Թազաքենդ հայկական գյուղի վրա: Հաջորդ օրը գյուղում գտնվող մարտիկ-զինվորները և տեղացի կամավորները Դրոյի հրամանատարությամբ հետ են մղում թշնամուն, հարձակումը կրկնվում է երեք օր հետո: Թազաքենդցիները, օգնություն ստանալով, դիմում են հակահարձակման և գրավում թաթարական Սիսիան գյուղը, հրդեհում գյուղի տների մի մասը: Այդ մասին Դրոն իր հուշերում նշում է. «Սիսիանի այրուները արասպետի տպաւորութիւն գործեց շրջանի թրքութեան վրայ»¹¹:

Օրջանի ինքնապաշտպանական մարտիկները որոշում են վերացնել Սիսիան-Գորիս ճանապարհին գտնվող թաթարական Աղուղի և Վաղուղի անհամագիստ գյուղերը, որոնց պատճառով երթևեկելը դարձել էր վտանգավոր: Հայկական պատժիչ խումբը դեկտեմբեր 25-ին հարձակվում և գրավում է Աղուղին, ապա ուղղություն վերցնում դեպի Վաղուղի: Թաթար հրոսակները, օգնություն ստանալով, կարողանում են դիմադրել և հետ մղել հայկական ուժերին: Վաղուղին գրավելու ծրագիրը ձախողվում է, և հայկական ուժերը նահանջում են: Այս ընդհարման ժամանակ թուրքերն ունենում են բազմաթիվ սպանվածներ՝ մոտ 60 հոգի, իսկ հայերը՝ 22: Այդտեղ զոհվում է Սիսիանում նշանավոր Ստեփան Ստեփանյանը¹²:

1906 թ. հունվարի 6-ի Սուրբ Ծննդյան օրվա տոնակատարությունների ժամանակ Անգեղակոթի վրա հարձակվում է 1000 հոգուց բաղկացած մի ավագակախումբ՝ Ծախալվար-բեկի ղեկավարությամբ: Գյուղի մարտիկները անվեհեր Քեռիի ղեկավարությամբ ետ են մղում թշնամուն, որը նահանջում է՝ իր հետ տանելով 8 սպանված:

1906 թ. հուլիսի 6-ին սարերից իջնող քոչվորները, միանալով Վաղուղիում գտնվող հրոսակներին, պաշարում են հայկական Ղալաջըղ գյուղը: Գյուղի պաշտպանները երեք օր անընդմեջ կռվելուց հետո կարողանում են հետ մղել մի քանի անգամ գերազանցող թշնամու ուժերը: Հուլիս 9-ին ժամանում է զորքը, որը բնակչությանը դուրս է բերում գյուղից՝ այն թողնելով խուժանի կամայականություններին, որը կողոպտում և ավերում է այն: Հայկական ուժերը, ի պատասխան Ղալաջըղի ավերման, հարձակվում և ավերում են թաթարական չորս գյուղ՝ Փուլը, Արիքուն, Օուքետար և Մալիքլարը¹³:

Գավառամասը խաղաղվում է 1906 թ. հուլիս 12-ին՝ պատժիչ կազակական զնդի ժամանումից հետո: Հրամանատար Գոլոշչակովի հրամանով զորքը ուժերակցում է Անգեղակոթ և Բոնակոթ հայկական գյուղերը, իսկ թաթարական գյուղերից՝ Ծաքին, Աղուղին, Վաղուղին և Թուրք Չարդախուն:

Ղափան գավառամասի ընդհարումները

Հայ բնակչության համբերատարության շնորհիվ այստեղ խաղաղությունը հնարավոր է լինում պահպանել մինչև 1906 թ. հունվարի 9-ը, երբ թաթար հրոսակները հարձակվում են Եղվարդ գյուղի վրա: Գյուղի ինքնապաշտպանական մարտիկների ջանքերով հարձակումը հետ է մղվում: Մողես գյուղի պաշտպանները, չկարողանալով դիմադրել թշնամու հարձակմանը, հունվարի 14-ին, գյուղը թողնելով թշնամու հրոսակներին, քոչում են դեպի Արծվահիկ: Ջեյվան և Եղվարդը հունվարի 18-22-ին կրկնվող հարձակումներին դիմադրում են և թշնամուն պարտադրում նահանջել:

Օգոստոս 2-ին Հանքերի «Այունիք» գործարանը թալանվում է տեղաբնակ թաթարների և յայլաններից իջնող ցեղերի կողմից: Անհավասար մարտում 8 հայ մարտիկ, 13 ժամ դիմադրելուց հետո երեք զոհ տալով, երեկոյան ժամը 9-ին, թողնում են գործարանը և նահանջում մոտակա Բարաբաթունք հայկական գյուղը: Թաթարները մտնելով գործարան, թալանում են ամբողջ գույքը, իսկ շինությունները կրակի մատնում: Ամբողջ վնասը հասնում էր 150000ռ.¹⁴:

¹¹ «Վէմ», երկամսյա հանդես, Փարիզ, 1935, № 2, էջ 53:

¹² Տե՛ս Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 281:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 288:

¹⁴ Տե՛ս «Դրօշակ», 1907 թ., № 1, էջ 7:

Թաթարների այս արարքի պատասխանը հայերի կողմից չի ուշանում: Հաջորդ օրը հայերը հարձակվում են Վերին Ուջար-չայի բազարի վրա և հրկիզում նախօրոք դատարկված գյուղը:

Թաթար անհաճագիստ զանգվածին շրջանից հեռացնելու նպատակով նույն օրը հայերը մեծ խմբով հարձակվեցին և պաշարեցին Քյարխանան: Թաթարները, անկատարող լինելով դիմադրել, փախուստի դիմեցին՝ ահագին զոհեր տալով¹⁵:

Հայկական ինքնապաշտպանական շտաբի կողմից նախօրոք զգուշացված Ղարաբաբա հայկական գյուղը թաթար հրոսակների օգոստոսի 6-ի հարձակումից հետո միայն լքվում է, և բնակիչները տեղափոխվում են Ագարակ: Գյուղի մարտիկները մի ամբողջ օրվա անհավասար կռվից հետո երեկոյան նահանջում են՝ տալով 5 զոհ:

Հաջորդ օրը թաթար հրոսակները թալանում և ավերում են Ղարաբաբան: Դրան ի պատասխան, Ագարակում գտնվող Յապոնի (Հովհաննես Պարոնյան) խումբը, իր հետ վերցնելով գյուղի մարտիկներին, հարձակվում և հիմնահատակ կործանում է Վերին Եմազլու, Ներքին Եմազլու, Սարալու, Խաշտափ և Ղուլդարա թաթարական գյուղերը:

Ներքին Հանդ, Սրաշեն և Ծիկահող գյուղերի տեղական ուժերը դիմադրում են թաթարներին: Մեկ օր հետո իր խմբով կռվի վայր է ժամանում Կորյունը (Գոմաս Խոս): Անցնելով հարձակման՝ խումբը հետ է մղում թշնամուն, գրավում և ավերում Քյուլու-Ղըշլաղ, Մթնածոր, Սանալու և Գոման գյուղերը:

Հաջորդ մի քանի օրերին ավերվում են Ջիրլուն, Խալաջը, Գեչի-Շաբադինը, Ինչավարը և Չուլլու¹⁶ թաթարական գյուղերը:

Թաթար հրոսակները Նախիջևանի Թեղի գյուղի նշանավոր ավազակապետ Սուլեյմանի գլխավորությամբ, հավաքվելով շրջակա գյուղերում, օգոստոսի 10-ին հարձակվում են Քաջարանի վրա: Գյուղը ավերվում է, իսկ բնակիչները ապաստանում են եկեղեցում, որը պաշտպանության համար ամրացված էր մի քանի հարմար դիրքերով: Երեք օր տևած դիմադրությունից հետո գյուղի մարտիկներին Մեղրիից օգնության են հասնում քաջ Ենոքի մարտիկները¹⁷: Նրանք ճանապարհին վերացնում են թաթարական հրոսակների որջ դարցած Ատկիչի և Օխչի գյուղերը, ապա ուղևորվում Քաջարան, այնտեղից դուրս բերում պաշարված բնակչությանը և տեղափոխում Հանդ գյուղ: Իր խումբը համալրելով Վերին Ղափանի և Քաջարանի տեղական ուժերով՝ Ենոքը իր խմբով շարժվում է Ծաբադի ուղղությամբ և 7 ժամ տևած մարտերից հետո գրավում այն:

Հայկական ուժերը կենտրոնանում են Հանդում. իր խմբով այնտեղ է ժամանում նաև անվեհեր Խեչոն, որտեղից հայկական ուժերը հարձակվում են Փիրդավդանի վրա և ավերում գյուղը:

Թաթարները որոշում են վրեժ լուծել. այդ նպատակով օգոստոս 7-ին իրենց ուժերը կենտրոնացնում են Ղաթարում: Հայերը, կանխազգալով թշնամու մտադրությունը, Մուրադի ղեկավարությամբ հավաքվում են Բեխում և օգոստոսի 12-ին պաշարում Ղաթարը: Առափոտյան, երբ թաթարները իրենց ժողովում դեռ շարունակում էին կշռել ու չափել Կավարտ գյուղի դեմ հարձակվելու ծրագիրը, Մուրադն իր խմբով արդեն մտնեցել էր Ղաթար գյուղին: Խումբը բաժանվում է երեք տասնյակի. Սմբատը, Վահանը և տեղացի մի քանի զինվորներ, գրավում են գյուղի դիմացի ամուր դիրքը, մի ուրիշ ամուր դիրք բռնել էին Ստեփանն ու Ալեքսանը՝ տեղացի զինվորների հետ: Մնացած 16 հայդուկների գլուխ անցած՝ Մուրադը պիտի ներս խուժեր գյուղ¹⁸: Նախքան գյուղ մտնելը, հայերը թաթար հրոսակներին առաջարկում են անձնատուր լինել: Չընդունելով առաջարկը՝ նրանք ցույց են տալիս ուժգին դիմադրություն: Կեսօրին երկրորդ անգամ թաթար հրոսակներին հանձնվելու առաջարկ է արվում՝ խոստանալով խնայել նրանց կյանքը: Տրվում է չորս ժամ՝ խորհրդակցելու համար: Որպես բարի կամքի դրսևորում հայերը գյուղից տեղափոխում են թաթար կանանց ու երեխաներին և մի գիշեր պահելուց հետո հասցնում են Շահարջիկ թաթարական գյուղ: Հայ մարտիկները նույնպիսի վարմունք են ցուցաբերում պարսկահպատակների հանդեպ: Առաջարկի երրորդ ան-

¹⁵ Տե՛ս Ա-Գօ, Գ2վ. աշխ., էջ 294:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 295:

¹⁷ Տե՛ս «Դրօշակ», 1907 թ., No 2, էջ 24:

¹⁸ Տե՛ս «Դրօշակ», 1906 թ., No 9, էջ 137:

գամ մերժվելուց հետո Աբրահամյանի Մուրադը հրամայում է ումբով ու դիմամիտով վերջ տալ թշնամու դիմադրությանը: Հայ մարտիկները հրամանատարի հանձնարարականը կատարում են շատ արագ և թաթարական բոլոր դիրքերը վերածում են ավերակների: Թաթար հրոսակները հուսահատվում են և տեղի են տալիս: Վերջապես ավազակային այդ որջը գրավվում և ավերվում է, կանգուն է մնում միայն մզկիթը, որի քանդելն արգելվում է հրամանատարի կողմից: Թշնամին այդ օրը 300-ից ավելի զոհ էր տվել¹⁹:

Օգոստոսի 15-ին թաթարները հարձակվում են Ուծենիսի վրա, բայց հետ են մղվում: Հաջորդ օրը հայ մարտիկներն անցնում են հակահարձակման և վերացնում շրջակա թաթարական բնակավայրերը: Մի շաբաթ հետո՝ օգոստոսի 22-ին, թաթարները, ստանալով նոր համալրումներ, պաշարում են Ուծենիսը: Հայկական ուժերը Մուրադի գլխավորությամբ հետ են մղում թշնամուն, որը ստիպված նահանջում է: «Գաւառապետի ասելով Ուծենիսի կուում թուրքերից 600 հոգի են սպանել»²⁰:

Այնուհետև որոշվում է վերացնել խուստուփի ստորոտում տեղակայված թաթարական բնակավայրերը: Օգոստոսի 26-ին հայ մարտիկներից կազմված մի խումբ Ենքի, Թադետի և Նենչոյի գլխավորությամբ ավերում է Առաջաձորը, Աջիլուն, Թուհիսը և Բաղաջուղը:

Գավառամասը խաղաղվում է 1906 թ. օգոստոս 28-ին, երբ հանքեր է ժամանում Ջանգեզուրի գավառապետը՝ սորաժնիկներով, երկու հարյուր կազակներով, մեկ հարյուրյակ զինվորներով և երկու թնդանոթով²¹:

Վերին Ղափանի ավերված թաթարական գյուղերի բնակիչները, որոնք տեղափոխվել էին Օրդուբադի և Նախիջևանի գավառամասերը, սեպտեմբերի 12-ին կազմելով հրոսակային հորդաներ, ուղղություն են վերցնում դեպի Հանդ և Բուրդիքենդ գյուղերը, պաշարում են դրանք: Երկու գյուղերի պաշտպանները կարողանում են անձնվիրաբար դիմադրել իրենցից տասնապատիկ անգամ գերազանց թշնամուն: Հայ մարտիկները թշնամուն գյուղերից ետ մղելուց հետո անցնում են հակահարձակման, և միայն կազակների և գեներալ նահանգապետ Բաուերի ժամանումը թշնամու ուժերին փրկում է կոտորվելուց:

Ընդհարումներից հետո սկսվեց տուգանքների գանձումը Ղափանում: 15 հայ գյուղերից վերցրին 13000 ռուբլու չափ տուգանք²²: Տուգանքներ են վերցվում նաև թաթարական գյուղերից:

Ջանգեզուրի գավառի 1905-1906 թթ. ընդհարումների արդյունքում հայկական գյուղերից վնասներ են կրել 15-ը, որից երկուսի բնակիչները կոտորվել են: Թաթարների կրած վնասները ավելի մեծ էին. ավերվել էր 43 թաթարական գյուղ, որոնցից 4-ի բնակիչները կոտորվել էին:

Զնայած Կովկասի թուրքերի (թաթարներ) բոլոր ջանքերին՝ հայությունը հերոսական դիմադրությամբ պաշտպանեց իր բնօրրանը թաթարական հրոսակախմբերի հարձակումներից և խափանեց գավառը թուրքացնելու նրանց ծրագիրը:

Г. А. ТАРХАНЫН - Армяно-татарские столкновения в Зангезуре 1905-1906 гг. - В статье исследуются армяно-татарские столкновения начала XX века в уезде Зангезур Елизаветпольской губернии.

События в Зангезуре были звеном в цепи столкновений, которые начались 6 февраля 1905 года в Баку и распространились в различных населенных пунктах Ереванской и Елизаветпольской губерний, в Тифлисе и Борчалу.

Эти столкновения, навязанные армянам Зангезура, закончились поражением кавказских татар, армяне же отстаивали свои исконные земли.

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

²⁰ Տե՛ս «Դրօշակ», 1907 թ., № 2, էջ 26:

²¹ Տե՛ս նույն տեղը, № 3, էջ 41:

²² Տե՛ս Ա.Ռօ, նշվ. աշխ., էջ 302: